ՍԻՐԱՆՈՒՇ ՀՈՎԻԿԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
հայ նոր գրականության բաժնի կրտսեր գիտաշխատող
parsadanyansiranush@gmail.com
ORCID ID: 0000-0002-5292-4614
DOI: 10.54503/978-5-8080-1557-9-403

ԼԵՎՈՆ ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ԴԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *Լևոն Մանվելյան, 20-րդ դարասկիզբ, գրապատմական արժեք, գեղարվեստական ընդգրկում, գրաքննադատական գործունեություն, գաղափարական համոզմունքներ, հայ գրականություն:*

Ներածություն

Սույն հոդվածը նվիրված է բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, մանկավարժ, գրաքննադատ և հասարակական գործիչ Լևոն Մանվելյանի (1864–1919) ստեղծագործության քննությանը 20-րդ դարասկզբի հայ գրականության համատեքստում: Գրական ասպարեզ մտնելով 19-րդ դարավերջին և հեղինակելով բանաստեղծություններ, պոեմներ, դրամատիկական պոեմներ, վեպ, գրական և թատերական հոդվածներ՝ Լևոն Մանվելյանը կարևոր դեր խաղաց հայ գրականության տվյալ փուլի ձևավորման գործընթացում՝ դառնալով ժամանակաշրջանի առանցքային հեղինակներից մեկը:

Ըստ այդմ, հոդվածի նպատակն է դիտարկել Լևոն Մանվելյանի ստեղծագործության բնորոշ գծերը տվյալ ժամանակաշրջանի և հայ գրականության տիրույթում: Հոդվածի նպատակից բխում են հետևյալ խնդիրները. ի՞նչով էր պայմանավորված հեղինակի բերած գրական-ստեղծագործական նորույթը, ի վերջո ի՞նչ դեր խաղաց Լևոն Մանվելյան հեղինակը հայ գրականության զարգացման ճանապարհին, և մասնավորապես ի՞նչ գործոններով էր դա պայմանավորված:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գրական տեքստի վերլուծության պատմահամեմատական, կենսագրական և հերմենևտիկ մեթոդները:

Ուսումնասիրության արդիականությունը և գիտական նորույթը պայմանավորված են 20-րդ դարասկզբի հայ գրականության ներկայացուցիչներից մեկի՝ Լևոն Մանվելյանի ստեղծագործական նրբերանգների բացահայտմամբ և նորովի վերհանմամբ ու մեկնաբանմամբ:

Լևոն Մանվելյանի ստեղծագործությունը և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը

Օրինաչափ երևույթ է, որ գրականության պատմության ամեն մի ժամանակաշրջան, բացի իր էությունը բնորոշող մեծ հեղինակներից, տալիս է նաև այնպիսի գրողներ, որոնք, գեղարվեստական մեծ հայտնագործություններ չկատարելով հանդերձ, զգալի դեր են խաղում տվյալ փուլի գրական գործընթացի ձևավորման ընթացքում[1]: Նման հեղինակ է նաև բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, մանկավարժ, գրաքննադատ և հասարակական գործիչ Լևոն Մանվելյանը (1864–1919):

Գրական ասպարեզ մտնելով 19-րդ դարավերջին և հեղինակելով բանաստեղծություններ, պոեմներ, վեպ, գրական և թատերական հոդվածներ՝ Լևոն Մանվելյանը կարևոր դեր խաղաց հայ գրականության այս փուլի ձևավորման գործընթացում՝ դառնալով ժամանակաշրջանի առանցքային հեղինակներից մեկը: Այսինքն՝ Մանվելյանը գրականության ընթացքի վրա ազդեցություն թողած հեղինակ է:

Նախնական կրթություն ստանալով Վերին Ագուլիսի ուսումնարանում՝ Մանվելյանը աշակերտել է Ռաֆֆուն և, բնականաբար, տարվել վերջինիս ազգային-քաղաքական հայացքներով ու գաղափարներով:

Լինելով բազմակողմանի զարգացած անձնավորություն և ժամանակաշրջանի լրջագույն մտավորականներից մեկը՝ Լևոն Մանվելյանը միաժամանակ եղել է համեստ, ջանասեր և ազնիվ գրող՝ գրա-

---

[1] Տե՛ս **Դավթյան Լ.,** Լևոն Մանվելյանի դրամաները, Եր., Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր, հ. 2, 1965, էջ 57:

կանության վերաբերյալ իր ուրույն համոզումներով ու գեղագիտական սկզբունքներով[2]: Դա են փաստում նրա գրաբանական հոդվածներն ու ժամանակակիցների վկայությունները:

Լևոն Մանվելյանի ստեղծագործական ժամանակաշրջանը հայ գրականության բեղմնավոր ու ամենաարդյունավետ շրջաններից մեկն է, գրականության պատմության մեջ այն նշանավորվեց տաղանդավոր ու ինքնատիպ հեղինակների գրական-ստեղծագործական բազմարդյունք գործունեությամբ՝ Ռաֆֆի, Շիրվանզադե, Մուրացան, Ծերենց, Ալեքսանդր Ծատուրյան Հովհաննես Հովհաննիսյան և ուրիշներ:

Ակնհայտ է, որ. «Քաղաքական, սոցիալական և անհատական այն բոլոր մոտիվները, ինչ տեսնում ենք Հովի. Հովհաննիսյանի և Ալ. Ծատուրյանի պոեզիայում, ունի և Մանվելյանը՝ուրույն ձևերով ու եղանակներով»[3]:

Գրականագիտության մեջ ընդունված է տեսակետը, որ. «Մանվելյանը սերում է Հ. Հովհաննիսյանի պոետական դպրոցից»[4]: Մանվելյանի բանաստեղծություններից ժամանակին լայն արձագանք է գտել «Միակ ճանապարհը», որում հեղինակը առաջ է քաշում բանաստեղծի կոչման խնդիրը, և որը գրվել է Հովհաննես Հովհաննիսյանի «Երկու ճանապարհ»-ի հետևողությամբ: ««Երկու ճանապարհ» ծրագրային բանաստեղծության մեջ Հովհաննիսյանը յուրովի որոշակիացնում է իր ստեղծագործությունների հիմնական ասելիքն ու ուղղությունը, որը կարծես պատասխան է նաև իրեն հեդոնիստ համարողներին»[5]:

Գրական երկերը, որպես կանոն, ժամանակաշրջանի տարբեր իրադարձությունների արձագանքն են և նրանց գեղարվեստական արտահայտությունը, հետևաբար անհրաժեշտ է դրանք քննել տվյալ ժամանակաշրջանի տրամաբանության մեջ: Հակառակ դեպքում. «Ստեղծագործության մեկուսացած, ներփակված վերլուծությունը կարող

---

[2] Տե՛ս **Մանվելյան Լ.,** Ընտիր երկեր, Եր., Հայպետհրատ, 1955, էջ 3:
[3] Նույն տեղում, էջ 4:
[4] **Հայ նոր գրականության պատմություն,** հ. 4, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 653:
[5] **Սաֆարյան Վ.**, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականություն, Եր., ԵՊՀ հրատ., 2022, էջ 180:

է կարող է հանգեցնել նրա գրական-հասարակական նշանակության և առնչությունների անտեսման»[6]:

Հայտնի փաստ է, որ միջնադարից հետո՝ 17–18-րդ դարերում և 19-րդ դարի առաջին տասնամյակներում սկիզբ առած գրական-հասարակական շարժումը ամբողջությամբ չէր լուծել իր առջև դրված խնդիրները՝ համապատասխան սոցիալ-տնտեսական և գաղափարական նախադրյալների անբավարարության պատճառով: Նոր տասնամյակների ժամանակահատվածը հայության համար տնտեսական, քաղաքական նոր հարաբերությունների ձևավորման, մեծ տեղաշարժերի, մտավոր զարթոնքի բարդ ու լարված շրջան էր: Այս պայմաններում իր պատմական առաքելությունը կատարեց հայ մտավորականության Զարթոնքի սերունդը[7]: Սամվել Մուրադյանը այս առիթով գրում է. «Աննախադեպ քանակական ու որակական աճ ունեցավ մամուլը, նրա շուրջ ձևավորված հասարակական հոսանքները զարգացրին հրապարակախոսությունն ու նրա լեզուն, հրատարակվող գրքերի հետ միասին մամուլը նույնպես իր էջերում տեղ էր տալիս գեղարվեստական գրականությանը, որով զարգանում էր նաև մեր բանաստեղծության, արձակի ու թատրերգության լեզուն: Նոր ժամանակներում լեզվի զարգացման ուղղությամբ անգնահատելի էր հատկապես թատրոնի դերը»[8]:

Իր ստեղծագործություններով, ազգային-գաղափարական համոզմունքներով, իրավամբ, Զարթոնքի սերնդի ներկայացուցիչ և շարունակող-հետևորդ լինելով՝ Լևոն Մանվելյանի ստեղծագործական նորույթը ուղղակիորեն կապված է թատրոնի հետ: Տարված է եղել Շեքսպիրի երկերով և վերջինիս ազդեցությամբ անգամ ողբերգություններ է գրել («Մարդատյաց», «Հայրասպան», «Իդեալներ և իրականություն», «Արտավազդ Բ»):

Ուշագրավ է «Տիգրանուհին» պատմադիցաբանական ողբերգությունը, որ Մանվելյանը գրել է պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հիման վրա և տպագրել 1891 թվականին «Մուրճ»-ում:

---

[6] **Զրբաշյան Էդ.,** Գրականագիտության ներածություն, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 81:
[7] Տե՛ս **Մուրադյան Ս.,** Հայ նոր գրականության պատմություն, գիրք Ա, Եր., ԵՊՀ հրատ., 2021, էջ 195:
[8] Նույն տեղում:

Մանվելյանի դրամաները առհասարակ ժամանակին մեծ արձագանք են գտել: Նրա դրամաների գրական արժեքը բարձր է գնահատել հատկապես Ստեփան Զորյանը՝ գրելով. «Մանվելյանի պիեսները, ինչպես իրական կյանքից առնվածները, այնպես էլ պատմականներր գրված են կենդանի, աշխույժ լեզվով և դիալոգներով: Կոնֆլիկտները թեև չեն խորանում և ստեղծում համապարփակ տիպեր, բայց զարգանում են բնական, ռեալիստորեն»[9]: Այս իմաստով նա մեծ ներդրում ունի իրաշաշտ դպրոցի հոգեբանական դրամայի զարգացման գործում՝ իր«Դոկտոր Երուանդ Բօշայեան» (1900), «Նկարիչ Թաշճեան» (1903), «Վերածնուածը» (1906), «Մագդա» (1913) գործերով:

Քնարական հաջողված ստեղծագործություններ ունի Մանվելյանը՝ հատկապես նվիրված սիրուն և բնությանը: Սակայն ակնհայտ է, որ. «Մանվելյանը շատ դեպքերում, փոխանակ բանաստեղծական ներշնչանքով ու տրամադրությամբ հասնելու ցանկացած էֆեկտին, պատմում է, թուլացնելով պոեզիայի գեղարվեստական պատկերավորությունը»[10]:

Մանվելյանի քնարական ստեղծագործություններից ամենաընթերցվածը և տարածվածը «Վայրի ծաղիկ» բանաստեղծությունն է՝ հագեցած սիրային տխուր նրբերանգներով.

Գեղեցի՛կ, հոտավե՛տ դու, ծաղիկ լեռնային,
Ո՞ւմ համար դու բուսար, ո՞ւմ համար ծաղկեցիր,
Ցրտերում մեծացար անխնամ, առանձին
Եվ մի օր չտեսար, ինչպես որբ վշտակիր[11]:

Այս բանաստեղծությունըժամանակին այնքան է սիրվել, որ Ռոմանոս Մելիքյանի կողմից վերածվել է երաժշտական ստեղծագործության:

Մանվելյանի ստեղծագործությունների համատեքստում ուշագրավ է «Դեպի վեր» դրամատիկական պոեմը, որտեղ նկարագրվում է մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի կյանքի կարևորագույն դրվագներից մեկը՝ Պարրոտի հետ վերելքը դեպի Արարատ[12]: Երկը

---

[9] **Մանվելյան Լ.,** նշվ. աշխ., էջ 6:
[10] Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, էջ 655:
[11] **Մանվելյան Լ.,**նշվ. աշխ., էջ 18:
[12] Տե՛ս նույն տեղում, էջ 107–116:

վերնագրված է «Դեպի վեր», սակայն պատկերված չէ բուն վերելքը դեպի Արարատ, նախքան վերելքն է և հետոն: Հեղինակը շեշտը դնում է ոչ թե գործողությունների ծավալման, այլ կերպարների զգացողությունների բացահայտման վրա: Գեղարվեստական տեսանկյունից պոեմը թույլ գործ է, սակայն հետաքրքրական է գաղափարական առումով: Աբովյանի՝ դեպի բիբլիական լեռ վերելքը սիմվոլիկ կերպով զուգահեռվում է գիտության բարձունքին հասնելու հետ: Իսկ Աբովյանը ներկայանում է որպես առաջամարտիկ, որի շնորհիվ պետք է տեղի ունենա հայ ժողովրդի լուսավորությունը և առաջընթացը:

Գրական և քննադատական գործունեությանը զուգընթաց՝ Լևոն Մանվելյանը զբաղվել է նաև գեղարվեստական թարգմանությամբ: Որոշ գործեր է թարգմանել Պուշկինից, Հայնեից, Գրիբոյեդովից, Շիլլերից, Լոնգֆելլոյից:

Մանվելյանը նաև վեպ է հեղինակել: «Խորտակված կյանք» վեպը այսօր ունի ճանաչողական և գրապատմական արժեք միայն, նրանում նկարագրված են ժամանակաշրջանին բնորոշ տիպիկ երևույթներ:

Լևոն Մանվելյանը ակտիվ կերպով զբաղվել է գրաքննադատությամբ: Նրա ծավալուն աշխատությունը՝ «Ռուսահայ գրականութեան պատմութիւն» վերնագրով, որը որպես դասագիրք ժամանակին ընդունված է եղել:

Մանվելյան գրաքննադատը, անդրադառնալով հայ գրականությանը և վերջինիս առնչություններին ժամանակաշրջանի բերած խնդիրների հետ, ուշագրավ դիտարկումներ է անում. «Հայկական վաղուց թառամած բանաստեղծությունը ութսունական թվականների վերջում նոր-նոր սկսում է ծաղկել, և այս բանը ինձ ուրախություն է պատճառում: Սա մի երևույթ է, որ ունի յուր հասարակական պատճառ-ները և որ անուշադիր չէ մնալու գրականության ապագա պատմաբանից: Թե ինչու այս կամ այն ժամանակներում երևան են գալիս մի տեսակ գրողներ,- ողբերգակներ, վիպասաններ կամ բանաստեղծներ, և գրականության այս կամ այն ճյուղը գերիշխող է դառնում, այդ խնդիրը պետք է որոնե յուր պատասխանը հասարակական կյանքի ընդհանուր պայմանների մեջ: Ասածս ի հարկե կարոտ չէ ապացույցների. նոր բան չէ այն միտքը թե գրականության և հասարակական կյանքի մեջ կա մեծ և փոխադարձ ազդեցությունն, և եթե

այսօր մենք նկատում ենք, որ մեր բանաստեղծությունը այս վերջին տարիներս սկսում է աչքի ընկնող տեղ բռնել գրականության մեջ, իրան ցույց տալ, այդ հանգամանքը ի հարկե արժանի է լուրջ ուշադրության և խրախուսանքի»[13]:

Հետաքրքրական են նաև Մանվելյանի՝ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների առիթով տպագրած քննադատական հոդվածները: Բարձր գնահատելով Թումանյանին՝ նա շեշտում է Ամենայն հայոց բանաստեղծի ստեղծագործական ինքնատիպությունը՝ գրելով. «Նա յուր պոեմաների մեջ նման չէ ոչ մեր հին, ոչ նոր բանաստեղծներին. նա կանգնած է առանձնակի, նա ինքնուրույն է, նա մի տեսակ նորություն է մեզ համար: Այդ առանձնահատկությունը ժողովրդական տարրն է, որ և կազմում է նորա վիպական ոտանավորների իսկական զարկերակը: Եվ իրավ, ցույց տվեք մեկին, որ այնպես սիստեմաբար և այնքան հաջող կերպով ոտանավորների նյութ շինած լինի հայ գյուղացու կյանքը, ինչպես այդ տեսնում ենք մեր բանաստեղծի պոեմաների մեջ»[14]: Ի դեպ, Թումանյանի ստեղծագործություններին առաջին լուրջ գնահատական տվողներից մեկը եղել է հենց Լևոն Մանվելյանը:

Եզրակացություններ

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ Լևոն Մանվելյանը, լինելով բեղուն հեղինակ և ժամանակաշրջանի զարգացած անհատներից, մտավորականներից մեկը, դրսևորելով գրական սկզբունքայնություն և ունենալով իր ուրույն տեղը տվյալ շրջանի հայ գրական-հասարակական տիրույթում, իր գեղարվեստական գործերով, ըստ էության, հայ գրականության պատմության մեջ որոշակի հետք թողած հեղինակ է միայն:

Լևոն Մանվելյանի ստեղծագործությունները այժմ առավելապես ունեն գրապատմական արժեք և առաջին հերթին հետաքրքրություն են ներկայացնում ժամանակաշրջանի գեղարվեստական ընդգրկման տեսանկյունից:

---

[13] **Մանուէլեանց Լ.,** Յ. Թումանեանի «Բանաստեղծութիւնները», Մուրճ, 1891, հ. 1, էջ 93:

[14] **Մանուէլեանց Լ.,** Յ. Թումանեանի «Բանաստեղծութիւնները», Մուրճ, 1891, հ. 1, էջ 95–96:

СИРАНУШ ПАРСАДАНЯН
Кандидат филологических наук,
младший научный сотрудник отдела новой армянской
литературы Института литературы НАН РА

РОЛЬ ЛЕВОНА МАНВЕЛЯНА В КОНТЕКСТЕ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ НАЧАЛА 20-ГО ВЕКА

Резюме

Данная статья посвящена исследованию творчества поэта, прозаика, драматурга, переводчика, педагога, литературного критика и общественного деятеля Левона Манвеляна (1864–1919) в контексте армянской литературы начала 20-го века. Вступив на литературное поприще в конце 19-го века и создав стихотворения, поэмы, драматические поэмы, роман, литературные и театральные статьи, Левон Манвелян сыграл важную роль в процессе формирования данного этапа армянской литературы, став одним из ключевых авторов эпохи.

Соответственно, целью статьи является рассмотрение характерных черт творчества Левона Манвеляна в контексте данного периода и армянской литературы. Целью статьи являются следующие задачи: чем была обусловлена литературно-творческая новизна автора, какую роль в итоге сыграл Левон Манвелян в развитии армянской литературы и, в частности, какими факторами это было обусловлено?

В ходе исследования были применены историко-сравнительные, биографические и герменевтические методы анализа литературного текста.

Актуальность и научная новизна исследования обусловлены выявлением, новым раскрытием и интерпретацией творческих нюансов одного из представителей армянской литературы начала 20-го века – Левона Манвеляна.

Подводя итоги исследования, приходим к выводу, что Левон Манвелян, будучи плодовитым автором и одним из развитых индивидуумов эпохи, проявляя литературную принципиальность и, имея свое особое место в армянском литературно-общественном пространстве данного периода, по существу, является автором, оставившим определенный след в истории армянской литературы. Произведения Левона Манвеляна в настоящее время имеют преимущественно историко-литературную ценность и представляют интерес прежде всего с точки зрения художественного охвата эпохи.

Ключевые слова: *Левон Манвелян, начало 20-го века, историко-литературная ценность, художественный охват, литературно-критическая деятельность, идейные убеждения, армянская литература.*

SIRANUSH PARSADANIAN
Candidate of philological sciences
Junior Scientific Researcher of the Department of Modern Armenian Literature of
NAS RA Institute of Literature named after Manuk Abeghyan

LEVON MANVELYAN'S ROLE IN THE CONTEXT OF THE EARLY 20TH CENTURY ARMENIAN LITERATURE

Abstract

This article examines the work of Levon Manvelyan (1864–1919) – poet, prose writer, dramatist, translator, pedagogue, literary critic, and public figure – in the context of the early 20th century Armenian literature. Entering the literary arena in the late 19th century and authoring poems, narrative poems, dramatic poems, a novel, and literary and theatrical articles, Levon Manvelyan played an important role in shaping Armenian literature of this period, becoming one of the key authors of the era.

Accordingly, the article aims to examine the characteristic features of Levon Manvelyan's work within the given time period and the domain of Armenian literature. The following questions arise from the article's objective: what determined the author's literary and creative innovation, what role did Levon Manvelyan ultimately play in the development of Armenian literature, and specifically what factors contributed to this?

The study employs historical-comparative, biographical, and hermeneutic methods of literary text analysis.

The modernity and scientific novelty of the study lie in revealing, newly uncovering, and interpreting the creative nuances of Levon Manvelyan, one of the representatives of early 20th century Armenian literature.

In summarizing the study, we conclude that Levon Manvelyan, while being a prolific author and one of the developed individuals of his time, demonstrating literary principle and having his unique place in the Armenian literary-social domain of the period, is essentially an author who left only a certain trace in the history of Armenian literature through his artistic works. Levon Manvelyan's works now primarily hold literary-historical value and are primarily of interest from the perspective of their artistic coverage of the era.

Keywords: *Levon Manvelyan, the early 20th century, literary-historical value, artistic scope, literary criticism activity, ideological convictions, Armenian literature.*